


Uppu English



ՀՐԱՄԱՆ  
Տ. ԵՓԲԱԾ

1908

# ՍԻՐՈՅ

# ԵՐԳԵՐ

ԲԱՆԱՏԵՂ ՃՈՒԹԻՒՆԵՐԻ

ԸՆՏԻՐ ԺՈՂՈՎԱՆԻ

Բ Ր Ե Լ Ի Ւ  
լոգրաֆիա „Բրատեստ“  
1908

891.99

Ա-35

C արտ-ն  
5943

891.39  
4-55

Հրատ. Մ. Եֆրիմյանի

# ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Բանասեղծութիւնների ընթիր ժողովածու



Թ ի Ֆ Լ ի Ս  
Տպարան «ՀերթէլՍ» Ա. Պ. Եղիզարեանի  
1908

31 JUL 2013

55419

ԹիրաՅ երգել \*

I.

Ի՞՞ Զ Զ Ե Ս Ե Ր Լ

Սէրը չուր է,  
Պիտի լողալ իմանաս,  
Սէրը սուր է,  
Պիտի վարել իմանաս,  
Սէրը հուր է,  
Պիտի նրան գիմանաս  
Թէ չէ՝ զուր է,  
Մնալու ես անմուրադ:

II.

Ա՛յ, հնվեր, սրինդ հովեր,  
Սիրականիս երգերն էք.  
Ա՛յ, ծնվեր, խռնվ ծովեր,  
Նրա սրտի վերը բն էք:

\*) Այս ժողովածուն իր մէջ պարունակում է  
նաև իմ մի քանի անտիպ երգերը:  
Մ. էլիրիկ.



59540-66

ԱՇ, աստղեր, վառ վառ աստղեր,  
Սիրականիս աչքերն էք.  
ԱՇ, շնորհեր գոհար ցօղեր,  
Արդեօք նրա արցունքն էք:

Վառ գիշեր, լուսնեակ գիշեր  
Սիրականիս երեսն էք.  
ԱՇ գիշեր թնւխազ գիշերներ  
Արդեօք նրա սև սուլզն էք:  
III.

Սիրուն աղջիկ, վարդի թերթիկ,  
Գարուն եկաւ իմ սրտին.  
Ծաղկի ցողիկ, վարնան հաղիկ,  
ԷՇ օտար չեն քո շնչին:

Ես վարդի թերթ, զու զով գեփիւու,  
Ինձ գուրգուրա այսուհետ,  
Ես ծաղկի ծոց, զու ցող ու բոյր  
Ապրիլ ցնողիր զու վարնան հետ:

IV.

Կար ժամանակ երբ ալ վարդը  
Իմ առաջիս էր բուրում,  
Նա կորդում էր սրտիս դարդը,  
Ռւրիշ մէկին ըն ձայսում:

Իսկ միս այժմ նոյն ալ վարդը  
Ռւրիշն է պատկանում,

Արդեօք դեռ շատ նա իմ սիրուը  
Պիտ տոչորէ անդադրում:  
V.

Շատ մի զգւիր չքնաղ վարդին,  
Պինդ մի ծծիր բոյրն անուշ  
Կը թառամի նա բու կը ծքին,  
Զեռքիդ կը մնայ միայն փուշ:

Իսկ թէ ունիս զու սիրուհի,  
Մեզ համբուրիր աչերը,  
Թէ չէ նրանց փայլը կանցնի  
Եւ կը թոռմի բու սէրը:

VI.

Սոխակը երգում էր այգում,  
Բացում էր սիրուն վարդենին,  
Եւ զու իմ գրկումն... լիշտում ես  
Բու չերմ համբոյրներն, իմ անդին:

Բայց վարդն աշնան թառամեց,  
Ալաղուց է չըկալ սոխակ.  
Դու էլ ինձանից հեռացար,  
Եւ ես մնացի միայնակ:

Երկար են և ցուրտ գիշերները.  
Եկ, սիրսա վարկում է ուժզին,  
ԱՇ միթէ օրհնեալ օրերից  
Միայն ցնորքներ մնացին:

5

VII.

Երկարիս զիշեր, մեծ տարի դարձիր,  
Դաժան, ու խաւար, իջիր թանձրացիր,  
Իմ մուրագն առ այսօր իրիգուն—  
Վերջապէս եկաւ հիւր եարը թագուն:

Եօթ սարի ետև կանգնիր, արշալոյս,  
Թէ չէ կը փախցնէ սիրածս ըռ լոյս,  
Թող յաւէս այսպէս, խաւարում մնամ,  
Միայն եարը՝ միշտ կրծքիս ունենամ:

VIII.

Դու տեսէլ ես ժայռի գլխին  
Ճերմակ հագած մատաղ կուսին,  
Երբ աղմկած խոր խաւարում,  
Ափերի հետ ծովս է խաղում:

Երբ փայլակը կուսի դէմքին,  
Շողողալով հուր է վառում,  
Քամին տալիս թեթև շորին՝  
Արագ դիպչում ու սլանում:

Գեղեցիկ են ծովս ու ալիք  
Աղմկալից խոր խաւարում,  
Եւ մութ երկինք, զոռ փոթորիկ  
Փայլակների վառ շողերում:

Բայց, հաւատա, որ այդ ժամին  
Մատաղ կոյսը ժայռի գլխին  
Գեղեցիկ է էլ առաւել  
Երկնքից էլ, փոթորիկից էլ:

IX.

Ե Պ Ա Զ

Աշնանամտի լուս գիշերին,  
Բնկած էի խոր քնի մէջ,  
Յանկարծ՝ կարծես իմ նազելին,  
Ինձ մօտ եկաւ սիրատենչ:

Ա՛խ, ափսոս որ երազ էր:

Ես լսեցի շատ քաղցրիկ ձայն,  
Խոսեց ինձ հետ իմ նազելին,  
Ու գարթնեցի նու հեռացաւ,  
Նորէն տիսրից՝ սիրտս վառւաւ.

Ա՛խ, ինչու այս երազ էր:

X.

Օ սառն է սիրտդ, նա էլ չէ զգում  
Սիրավառ երգչիս հզօր հառաջներ,  
Այս երբ պիտի ես վստահ կարենամ  
Դէպ կուրծքդ ուղղել սրտիս հուր կայծեր—  
Որ նա տաքանայ:

Որ հետզնտէ իբր անշէջ հրդեհ,  
Վառի կրակը իմ դէպ քեզ ուղղած,

Որ դու էլ ճշաս, միասս, հառաչես,  
ինձ նման տիսուր կանչես լոկ Աստւած—  
Սիրտս զովանայ:

Մինչեւ որ անցնեն տանջալից օրեր,  
Քաս ինձ գրկելու էլ չըլնի թախիծ,  
Երդիս յաւիտեան սիրել ջերս անկիղծ,  
Որ նախկին հզօրմաշող հրդեհից—  
Մոխիրը մեայ:

### XI.

Սև աչեր, սև աչեր  
Բաւական է ինձ տանջեր.  
Եւ ձեր անդին հրապուրով  
Իմ վառ սիրտը վրդովէք:

Վրդցվեցիք իմ հանգիստը  
Քունը փախցրիք իմ աչբիցը,  
Վերջին յոյսս, վերջին օրս  
Դժուք խեցիք իմ սրտիցը:

### XII.

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

Երիտասարդ մը տահնով  
Բոլոր սրտով կը սիրէր  
Աղջիկ մը, —և ըսէր նի  
Երբէր այս բան չէ ըրեր:

Բայց սիրուհին օր միրեն  
Բսաւ, «Կուղես քեզ սիրեց»  
Ականջն ի վար միզմօրէն,  
«Եսածո ըրէ, քեզ տեսնիմ:

«Գնա բեր ինձ, կը բանս,  
«Մօրդդ սիրտը, որ շուտով  
«Շուներուն տամ, և այսպէս  
«Քեզի սիրեմ իմ հոգւով»

Շուտ մը վաղեց յիմարը,  
— Դէ, ինչ սե օր, ինչ փորձանը,  
Եւ սպանեց իր մայրը,  
Որ տած էր իրեն կհանը:

Խել սիրտը այդ կուրծքէն  
Եւ գուրս ելլեին մէկ եղաւ,  
Շուտ հասնելու տենչանքէն,  
Վազած տաեն վար ինկաւ:

Սիրտը ձեսքէն սահեցաւ  
Գլուխցաւ ի գետին,  
— «Ո՞ր տեղի, որդի, ցաւեցու»  
Հարցուց Սիրտը լաւագին:

### XIII.

Ես չեմ հաւատում թէ ովհանի զայ օր  
Որ դու վերսաին ինձ գրկես ամուր,

Եւ յիշատակները՝ դառն անցեալի  
Դարձնես լոկ երգ մի արտասւալի:

Այլ հաւատում եմ շուտով գեռ վաղ  
Դու պիտի տեսնես մի անշուք դագավ,  
Եւ որ պիտ տանեմ ինձ հետ գերեզման,  
Քո ջերմ արձունքից «մի կաթիլ միայն»:

#### XIV.

Ծաղիկ, ես քեզ տեսայ թօշնած,  
Պահւած էիր դու գրքում  
Եւ անսովոր մի ջերմ պատրանք  
Իսկոյն եռաց իմ կրծքում:  
Ո՞ւր ես ծաղկել, ի՞րբ, ո՞ր գարնան,  
Ո՞վ է արգեօք քեզ քաղել.  
Օտար... ծանծթ... Եւ ինչո՞ւ է,  
Արդօք անխօս մի վկայ ես  
Դու գոյգ մատաղ սրտերի  
Ջերմ, սիրացին տեսակցութեան,  
Եւ սիրավառ զլոյցների...  
Թէ մի տխուր յիշատակ ես  
Դան անշատման, տանչանքի  
Կամ դատերում, լուս կարօտած  
Անյոյս, մենակ զրօսանքի...  
Եւ ուր են այն սիրող սրտերն,  
Կմն, ապրում են երջանիկ,

Թէ երկուսն էլ, քեզ պէս անյայտ,  
Թառամել են, այ ծաղիկ:

#### XV.

Ահա նազելիս, վերջին ողջոյնս,  
Ու նւիրեմ ես քեզ վերջապէս—  
Սա է իմ ողջոյն, վերջնական յոյս,  
Որ նւիրում եմ աղնիւնազելուս:

Ահա վերջապէս գալիս է մի օր  
Ես քեզ հաւատացնեմ որ մեր՝  
Սիրոյ ժամերը անցան գնացին,  
Եւ ահա եկաւ օրն ուրախութեան:

Բաւարարւիր դուն սորանով...  
Զը կարձես լուրջ չէ ու սիրով,—  
Այժմ ցոյց տամ մի այլ տեսարան,  
Ու երթանք այնտեղ լնդմիշտ միասին:

#### XVI.

Ալ ու կանաչ շողերի մէջ,  
Սէք լեռները կը ծփան,  
Ալ ու կանաչ շողերի մէջ,  
Արուսեակներ կը ժպտան:

Արև սիրուդ շողերի մէջ  
Իմ յուշերը կը ծփան,  
Դարնան կոյս այլու մէջ  
Քո շրթները կը ժպտան:

XVII.

— Արք վարդ այսերդ դիր այսերիս,  
Թող սիրոյ ցաւը հեղեղի պէս  
Առատ ու պղտոր ցայտէ դէպի դուրս,  
Որ գուցէ երկնքը կարելցէ մեզ:

Ել մի անվատահ նայիր տչքերիս  
Զէ որ մենք այժմ մենակ ենք—անտէր,  
Եկ կուրծքդ ամուր սեղմիր իմ կրծքիս,  
Այնտեղից ժայթքէ մեր սիրոյ բոցեր:

Եկ մօտեցիր ինձ, միտին սպանք  
Ես ել սէր սպամ, զու ել սէր սպայ,  
Անընդհատ վայենը խորտակւած մեր կեանք  
Մինչև օրհասի վերջին ժամը զայ:

XVIII.

Սիրահարութեան զրկում ընկած եմ դաժան  
Մթութեան զժրադդ ու սկ կարիքում,  
Եւ մսիթարում ես նորա հոգուն  
Բայց նորա անունն է ծաղիկ-անթառամ:

Լուս էր բնութիւնը... ես դիտում էի  
Աստղերու մէջ հեռաւ ինձանից,  
Աշխ, նա թռչում էր աղատ համարձակ—  
Եւ հեռանում, իմ վառւած սրտից.

Ես դիտում էի հեռան ահաւոր...  
Եւ բազէի նման ես թռիչը առայ,  
Ու ընութեան մէջ հո նորան հասայ  
Ամուր զրկեցի մինչ իմ բաւարար:

XIX.

Հանգիստ իմ անոյշ  
Անցար գնացիր,  
Միայն վէրք անլոյժ  
Մրտումս թռղիցիր:

Սոխակն գեղեցիկ  
Կանաչ պարտիզում,  
Երգելով քաղցրիկ  
Ինձ չէ գրաւում:

Քեզանով միայն  
Երջանիկ էի.  
Տիկին ինքնիշխան  
Ինձ կարծում էի:

Յերեկը մենակ  
Փակւած սենեակում  
Ողբում եմ անյափ,  
Ոչ ոք չէ լսում:

Գիշեր է գալիս—  
Մահիճ եմ մանում.

Տրտմում է հոգիս,  
Քունս չէ տանում:

Մազեր թուիս, երկայն,  
Աչեր գրաւիչ.  
Ինչ հասակ, ինչ ձայն  
Ինչ հոգի կտրիչ:

Ոչ, սիրտս այրւած  
Ողջ քեզ է կանչում.  
Ողջ քո անմռոաց  
Անունդ է յիշում:

Անգութ. ինձ խարեց,  
Ուրիշն սիրեց,  
Ալս, նա ինձ գեռ վաղ  
Պատրաստեց դագաղ:

XX.

Սիրոյս ժամերը անան-պնացին  
Երկրի երեսին ինձ որբ թողեցին,  
Ես նրանց համնել չեմ կարող բնաւ,  
Նրանք ինձ մահին յանձնեցին դրաւ:

Իզուր իմ մաքում անքուն գիշերներ  
Ուզում եմ գտնել նորից կորած սէր,  
Իզուր եմ ապրում, իզուր եմ երգում,  
Նախկին սիրահարը ինձ ճանաչում:

Ա՛խ, նա անբաժան իմ ժտածմունքից  
Կոյսը հեռու է հեռու ինձանից,  
Էլ չեմ գրկելու ես նրան կրկին,  
Սիրոյս ժամերը անցան-զնացին:

XXI.

Ն Ի Ա Ն


Դէհ, պատան կարիր, շինի մի դագաղ,  
Կեանքից զրկւածը շիրիմ է զիմում...  
Լոիր, երգում եմ արցունքի մի տաղ,  
Վերջին արցունք ես քեզ եմ ձօնում...  
Ես քեզ եմ ձօնում  
Արցունք ու արիւն,  
Վերջին հրաժեշտի  
Տանջալից ողջոյն...

Խորտակած սրտով գերեզման կնրթում,  
Սէրըդ կրծիս տակ հողին կը յանձնեմ,  
Շիրիմիս մէջ էլ կը լսմ, կը ողբաժ  
Եւ շուրտ դագաղս արցունք կը լցնեմ...  
Արցունք կը լցնեմ  
Ես կաթիւ, կաթիւ  
Մինչև կը լսեմ  
«Սիրում եմ... դապլիր...»

Ես քեզ կը սիրեմ դագաղիս մէջ էլ,  
Կը տանջւեմ այնտեղ միայն քեզ համար.

Լարիս աղէղը դ, դէհ խփիր մէկ էլ  
 Խփած վերքերդ են անթիւ անհամար...  
 Անթիւ անհամար  
 Նետերից խոցւած,  
 Սեղա սիրառ վեր առ,  
 Շիբիմ փայփայած...

Իսկ դու, գու հրձւիր քո զոհով  
 Կհանքիս թշնամի կեանքս տւի քեզ...  
 Ես քեզ սիրեցի, մեռայ սիրելով,  
 Եւ գու արցունքս միայն կը յիշես...  
 Միայն կը յիշես  
 Տանջանք և թախիծ,  
 Բողոքը սրուիս  
 Եւ լաց, և կոկիծ...



C 9/2000  
5943

ԳՐԱՆ է 5 հ/թ.

Դիմել զբավահասներին

ՀՀ Ազգային գրադարան



NL0357658

-55419